

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

«Քան զամենայն հանդեսս պանծալիս արարողութեանց եւ ծիսից Նայասրանեայցս Եկեղեցոյ շքեղաշուք եւ վայելչագարդ լեալ են անդրսպին ի սկզբանէ գերահռչակ հանդէսք ձեռնարողութեան եպիսկոպոսաց...» («Մաշտոց ձեռնարողութեան եպիսկոպոսի»):

Ն.Ս.Օ.Տ.Տ. Ղարեգին Բ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարեհաճ տնօրինությամբ դեկտեմբերի 19-ին Ս. Էջմիածնի Մայր Տաճարում տեղի ունեցավ եպիսկոպոսական չեռնարություն և օծում. «ի քահանայութենէ յեպիսկոպոսութիւն» կոչվեցին Երուսաղեմի և Կ. Պոլսո Հայոց նվիրապետական աթոռներից Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի լուսարարապետ Տ. Նուրիան ծ. վրդ. Մանուկյանը և Կ. Պոլսո Հայոց պատրիարքության Կրօնական ժողովի ատենապետ Տ. Արամ ծ. վրդ. Աթեշյանը:

Հայոց Եկեղեցու հնավանդ կանոնների համաչայն, նախքան չեռնարությունն ու օծումը՝ կատարվում է «պերդումն եւ պոխտ եպիսկոպոսական աստիճանին»: Ահավասիկ դեկտեմբերի 18-ին, երեկոյան ժամերգության ընթացքում, «ի ծունկս ... առաջի սեղանոյ Իջման տեղոյն» ընծայացուները հանդիսապես ընթերցում են իրենց երդումնագրերը. «...ճշմարտութեամբ եւ ուղղութեամբ խղճի մտացս եւ սրտիս երդնում պերդումն սուրբ ըստ առաջիկայ պայմանաց»:

Նվիրյալները հանդիսավոր կերպով, «առաջի աստուածային սեղանոյս եւ աստուածընկալ սուրբ նշանացս», խոստանում և ուխտում են «անխտոր եւ անսայթաք ընթանալ ի վարդապետութեան հաւատոյ եւ պատուիրանաց Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցոյ...»: Հավատալիքների և Մայ-

րավանքի ողջ միաբանության ներկայությամբ նվիրյալները խոստանում և ուխտում են մինչև իրենց կյանքի վախճանը հավատարիմ լինել Ս. Էջմիածնին, «եւ կալ մնալ հլու հպատակութեամբ ի ներքոյ իշխանութեան եւ հրամանաց Սրբոյ Կաթողիկէ Մայր Աթոռոյս»:

Երդումնագրերի ընթերցումից հետո ընծայացուները Ս. Խաչն ու Ս. Ավետարանը համբուրելով՝ «յարուցեալ ստորագրեն ի ներքոյ երդումնագրոցն պանունս իրեանց»:

«Նրամայեալ է ձեզ ի Տեառնէ յառաջ մարջել եւ ողջամիտ դիպաւորութեամբ բացայայտել մեզ գոր ինչ խնդրէք» («Մաշտոց...»):

Դեկտեմբերի 19-ին, ժամը 10.30-ին, Մայր Տաճարի քաղցրալուր պանգերն ազդարարում են Ս. Պատարագի սկիզբը: Օրվա պատարագիչն էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը: Հանդիսավոր թափորը, «Խորհուրդ խորին» պգեստավորման երգի Կոմիտասյան հոգեթով եղանակի ներքո, Հայոց Հայրապետին առաջնորդում է Մայր Տաճար՝ կատարելու իր անդրանիկ եպիսկոպոսական չեռնադրությունը:

«Հրաշափառ Աստուած» շարականի երգեցողությամբ Վեհափառ Հայրապետը և հանդիսավոր թափորի մասնակիցները մուտք են գործում Մայր Տաճար: Իջման Ս. Սեդանի առջև կատարվում է Ս. Պատարագի մուտքի արարողությունը /չեռաց լվացում, հրապարակային խոստովանություն/: Այնուհետև պատարագիչ Վեհափառ Հայրապետը «պաշտօնէիքն իւրովք ... ելանէ ի սեղան սրբոյն Ստեփաննոսի ի դնել զսպաս խորհրդոյ Պատարագին»:

Ապա «Հովի քաջ բանաւոր հօտի» շարականի երգեցողության ընթացքում Վեհափառ Հայրապետը Ս. Սեդանին և ժողովրդին խնկարկելուց հետո բազմում է Հայրապետական գահին, որպեսզի ունկնդիր լինի Սուրբ և Առաքելական Աթոռի միաբանության և «համօրէն ուխտի» ներկայացնելիք խնդիրներին. «Խնդիր ունիմք ի բարչրագահ Տէրութենէդ»:

Ընկալյալ կարգի համաչայն, Հայոց Եկեղեցու նվիրապետական աստիճանների ներկայացուցիչները՝ դպիրներ, կիսասարկավագներ, սարկավագներ, քահանաներ, եպիսկոպոսներ, ինչպես նաև ժողովրդի ունևոր (իշխանք) և չքավոր (աղքատք) խավերը ներկայացնող զույգ աշխարհականներ, «պաշտելով զՍուրբ Աստուածն», մոտենում են Վեհափառ Հայրապետին և եպիսկոպոս չեռնադրվելիք ընծայացուների մասին իրենց վկայությունները տալիս:

գահին և նվիրյալները մոտենում ու ծնրադրում են նրա առջև: Հայոց Հայրապետը «դնելով գաջն ի վերայ գլխոյն» ընթերցում է «Տէր Աստուած մեր ...» աղոթքը:

Այս ամենից հետո նվիրյալները «յեռան ի վեր առեալ», ի նշան աշխարհից հրաժարման, դառնում են դեպի հավատալի ժողովուրդը. դպրաց խումբը երեք անգամ երգում է «Աստուածային եւ երկնաւոր շնորհ ...»-ը՝ Նորիհան և Արամ վարդապետներին քահանայությունից կոչելով եպիսկոպոսության: Այնուհետև համապատասխան աղոթասացություններից, սուրբգրային ընթերցումներից և երգերից հետո, հանդիսավորապես Ավագ Ս. Խորան է բերվում Սրբալոյս Սյուռնով լի Սյուռնաթափ Աղավնին: Վեհափառ Հայրապետը Հայոց Կենարար Սյուռնով օրհնում, օծում և սրբում է նվիրյալների ճակատները և աջ յեռքի բութ մատները:

«Օծումնս Կոր հեղեր...» աղոթքի ընթերցումից հետո Հայոց Հայրապետը նորընծա եպիսկոպոսներին, որպես եպիսկոպոսական իշխանության խորհրդանիշներ, տալիս է գավազան և մատանի, նաև, ի նշան Աստծո Կենաց Խոսքի անչանչիր քարոզչության՝ Ս. Ավետարան:

Եպիսկոպոսական յեռնադրությունը և օծումն ավարտվում է Վեհափառ Հոր «Պահպանիչ»-ով: Ապա Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրապետական օրհնության խոսքն է հղում նորընծա եպիսկոպոսներին և հավատավոր հայորդիներին:

Ս. Պատարագի արարողությունից հետո, ի պատիվ նոր յեռնադրյալ և օծյալ եպիսկոպոսների, Մայր Աթոռի սեղանատանը Տ.Տ. Գարեգին Բ Հայրապետի մասնակցությամբ տեղի է ունենում հյուրասիրություն: Այդ ընթացքում Վեհափառ Հայրապետը, որպես եպիսկոպոսական աստիճանի խորհրդանիշ, նորածն եպիսկոպոսներին հանչնում է հայրապետական ընծաներ՝ պանակներ:

«Աղաչեմ Կմեծ Զո Կողորմութիւնդ Տէ՛ր, պարգեւօք Զո Կօրայո՛ւ Կսոցա ի նմանութիւն խոնարհութեան Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Զրիստոսի».

ամեն:

ԱՐԹՈՒՐ ԴՊԻՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Գևորգյան Նոգևոր Ճեմարանի

Ե լսարանի սան